10.02.24 - 10.02.24
12:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն

Ս.թ. փետրվարի 10-ին՝ ժամը 12:00-ին, Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնում (AMCA**)** կանցկացվի «Vis Moot» միջազգային հեղինակավոր դատախաղի փորձնական խաղը։

«Vis Moot» դատախաղը արբիտրաժի և մասնավոր իրավունքի ոլորտում աշխարհի ամենահեղինակավոր դատախաղն է, որն անցկացվում է 31 տարի անընդմեջ՝ ներգրավելով իրավաբանների, հեղինակավոր պրոֆեսորների և ուսանողների՝ համախմբելով մասնագիտական համայնքը։

Դատախաղին մասնակցում են աշխարհի շուրջ 400 համալսարաններ, 4000 ուսանողներ և մոտ 2000 արբիտր։

Հայաստանում անցկացվող միջազգային դատախաղի փորձնական տարբերակին կմասնակցեն Հայաստանի 3 համալսարանների ներկայացուցչական թիմերը, որոնց թվում է նաև Երևանի պետական համալսարանի թիմը։

Միջոցառմանը ներկա կլինեն մի շարք հեղինակավոր իրավաբաններ և արբիտրներ, այդ թվում՝ ՀՀ արդարադատության նախարարության « Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի տնօրեն Տիգրան Դադունցը և վերջինիս տեղակալ, ԵՊՀ թիմի մարզիչ Դավիթ Ղարիբյանը։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am